ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0090, ք.Երևան, Շոպրոնի 77

N 01/13486 <22> 01 2022թ.

Վաղինակ Հենրիկի Տոնոյանին
Հասցե՝ ք. Երևան, Հաղթանակ 9-րդ նրբ. 5 տուն.

Ուղարկում եմ Ձեր դիմումի հիման վրա ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության իրավաբանական բաժանմունքում իրականացված վարչական բողոքարկման վարույթի արդյունքում թիվ 8180210269 և թիվ 8180210270 վարչական ակտերն անփոփոխ թողնելու մասին որոշումը:

Առդիր՝ << >> թերթ:

Պետ,
ոստիկանության գնդապետ՝ Ա. Ումրշատյան

կատ. Ս. Ասատրյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 14.06.2022թ.-ին կայացված թիվ 8180210269 և թիվ 8180210270 որոշումները անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 26 >> 07 2022թ. ք.Երևան

ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության պետ, ոստիկանության գնդապետ Ա. Ումրշատյանս, վերանայելով Վաղինակ Հենրիկի Տոնոյանի (Ծանուցման հասցե՝ ք. Երևան, Հաղթանակ 9-րդ նրբ. 5 տուն.) (Այսուհետ՝ դիմող) 27.06.2022թ. դիմումի հիման վրա հարուցված վարչական բողոքարկման վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

14.06.2022թ.-ին՝ ժամը 21:49-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտայում դիմողը «Հոնդա» մակնիշի 36 TG 109 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը վարել է առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր և օրենսդրությամբ սահմանված կարգով տեխնիկական զննություն չանցած վիճակում: ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Լոռու մարզի 1-ին վաշտի 3-րդ դասակի պարեկ Մկրտիչ Հակոբյանի կողմից վարորդի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ և 123.4-րդ հոդվածի 4-րդ մասերի համաձայն և կայացվել թիվ 8180210269 և թիվ 8180210270 որոշումները՝ դիմողին համապատասխանաբար 100.000 և 20.000 ՀՀ դրամի չափով տուգանելու մասին:

Դիմողը 27.06.2022թ.-ի դիմումով խնդրել է անվավեր ճանաչել պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 14.06.2022թ.-ին կայացված թիվ 8180210269 և թիվ 8180210270 որոշումները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ՀՀ ոստիկանության պարեկային

ծառայության իրավաբանական բաժանմունքում հարուցվել է վարչական բողոքարկման վարույթ:

Դիմումի քննարկման արդյունքում ձեռք բերված ապացույցների և փաստական տվյալների համադրմամբ պարզվել է, որ վարչական իրավախախտման գործով 14.06.2022թ.-ին կայացված թիվ 8180210269 և թիվ 8180210270 որոշումները ենթակա են կատարման հետևյալ պատճառաբանությամբ և հիմնավորմամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով սահմանված կարգով վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու և լսված լինելու հնարավորություն տալու նպատակով դիմողին ուղարկվել է ծանուցում՝ վարչական լսման օրվա և ժամի վերաբերյալ:

Պարեկային ծառայողի պարզաբանման համաձայն՝ դիմողը Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտայում վարել է տրանսպորտային միջոց, որը չի ունեցել գործող ԱՊՊԱ պայմանագիր և տեխնիկական զննություն անցած չի եղել: Վարորդի նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ, որոնց վերաբերյալ դիմողը առարկություններ չի ներկայացրել, ստորագրել է դրանք և վերցրել որոշումների իր օրինակները: Վարորդը ներկայացրել է այլ պետության վարորդական վկայական, որը որոշում կայացնելուց հետո՝ սահմանված կարգով վերցվել է, մինչև գործով կայացված որոշման կատարումը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհով ավտոտրանսպորտային միջոցի վարումը, եթե դրա համար առկա չէ այն վարելու պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Այսինքն՝ օրենսդիրը իմպերատիվ կերպով արգելել է ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոց վարելը՝ առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ ոստիկանության ծառայողը պարտավոր է տրանսպորտային միջոցը կանգնեցնել, եթե ակնհայտ կամ

տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները:

Ըստ ՀՀ կառավարության 1251 որոշմամբ հաստատված ՃՈ էլեկտրոնային ռեգիստրի և Հայաստանի ապահովագրական ընկերությունների ավտոապահովագրական «ASWA» էլեկտրոնային կայքէջի տվյալների՝ «Հոնդա» մակնիշի 36 TG 109 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 14.06.2022թ.-ին՝ ժամը 21:49-ին, իրավախախտման հայտնաբերման պահին, ԱՊՊԱ պայմանագիր չի ունեցել:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են տեխնիկական զննության:

Նույն հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տրանսպորտային միջոցների առաջին տեխնիկական զննությունն իրականացվում է թողարկմանը հաջորդող չորրորդ տարում:

Նույն հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ թողարկման տարեթվից հաշված՝ 10-ից ավելի տարվա արտադրության թեթև մարդատար ավտոմոբիլներ, բեռնատար տրանսպորտային միջոցներ, ուղևորի մինչև 8 նստատեղ ունեցող բեռնաուղևորատար տրանսպորտային միջոցներ, կցորդներ (կիսակցորդներ), մոտոցիկլեր (բացառությամբ սույն մասի 2-րդ կետով նախատեսված տրանսպորտային միջոցների)՝ ենթակա են տեխնիկական զննության տարին մեկ անգամ:

«Վարչական իրավախախումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տեխնիկական զննություն չանցած կամ տեխնիկական զննությամբ ի հայտ եկած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքություններից կամ պայմաններից որևէ մեկի առկայությամբ տրանսպորտային միջոց վարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սեփականատիրոջ կամ տիրապետողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

«Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 24 սեպտեմբերի 2021 թվականի N 1565-Ն որոշման 9-րդ կետի համաձայն՝ տեխնիկական զննությունն իրականացվում է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա ունեցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից՝ անկախ տրանսպորտային միջոցների հաշվառման վայրից:

Նույն որոշման 16-րդ կետի համաձայն՝ տեխնիկական վիճակի ստուգման արդյունքի հիման վրա էլեկտրոնային եղանակով ձևակերպվում է տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության արատորոշման քարտը (այսուհետ՝ արատորոշման քարտ)՝ համաձայն ձևի:

Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ արատորոշման քարտը տպվում է նաև թղթային եղանակով՝ մեկ օրինակից: Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի հսկիչի և տրանսպորտային միջոցը տիրապետողի կամ սեփականատիրոջ կողմից ստորագրվելուց հետո հանձնվում է վերջինիս:

Նույն որոշման 20-րդ կետի համաձայն՝ տեխնիկական զննության արդյունքում տեխնիկական զննության կայանները համապատասխան ծրագրային ապահովման միջոցով կատարում են տեխնիկական զննություն անցած տրանսպորտային միջոցների տվյալների մուտքագրում:

Նույն որոշման 22-րդ կետի համաձայն՝ տեխնիկական զննության կայանների միասնական շտեմարանից օգտվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը:

Շրջանառության մեջ գտնվող տեխնիկական զննության այն կտրոնները, որոնք ձեռք բերողները տրանսպորտային միջոցները չէին ներկայացրել տեխնիկական զննության կայան տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության ծառայություն ստանալու համար, կարող էին ներկայացվել մինչև 2022 թվականի հունվարի 30-ը:

Ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային ռեգիստրում և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության միասնական շտեմարանում՝ վարչական իրավախախտման ավերաբերյալ արձանագրություն կազմելու պահին, «Հոնդա» մակնիշի RR1-1018336 նույնացման համարով տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության վերաբերյալ տեղեկություններ առկա չեն եղել:

Վերոգրյալից հետևում է, որ դիմողի վարած «Հոնդա» մակնիշի 36 TG 109 հաշվառման համարանիշի RR1-1018336 նույնացման համարով տրանսպորտային միջոցը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմելու պահին ԱՊՊԱ պայմանագիր չի ունեցել և տեխնիկական զննություն անցած չի եղել:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և սոցիալիստական իրավագիտակցությամբ:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ և 123.4-րդ 2-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտման հատկանիշները, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 14.06.2022թ.-ին կայացված թիվ 8180210269 և թիվ 8180210270 որոշումները թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել դիմողին և պարեկային ծառայության Լոռու մարզի գումարտակ:

Պետ,
ոստիկանության գնդապետ՝ Ա. Ումրշատյան